ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/102

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից 09.10.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. <u>«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 09.10.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի նախապատմությունը և փաստերը.

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար կազմակերպվել է «Ագարակ քաղաքի Չարենցի 27/15 հասցեում զբոսայգու կառուցման աշխատանքների» ձեռքբերման նպատակով «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Վերոհիշյալ ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել «Մաստարա» Ա/Կ-ն և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.09.2018թ. թիվ 3 արձանագրության 4.1 կետի՝ գնահատող անդամները գնաՀատել են, որ «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման՝ ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված նվազագույն պահանջներին, բացառությամբ «Մաստարա» Ա/Կ-ի, որի ներկայացրած հայտի գնային առաջարկում Մասնակցի անվանումը /ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանունը/ տողում լրացված են այլ կազմակերպության և տնօրենի անուն, իսկ հրավերով նախատեսված լիցենզիաները ներկայացնելիս մասնակցի կողմից կցվել են այլ կազմակերպության լիցենզիաներ:

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և տեղեկացնել «Մաստարա» Ա/Կ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.10.2018թ.ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Մաստարա» Ա/Կ-ի կողմից 01.10.2018թ-ին շտկվել են անհամապատասխանությունները:

Նույն արձանագրության 5.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Մաստարա» Ա/Կ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն:

Այնուհետև՝ 05.10.2018թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Մաստարա» Ա/Կ-ն ճանաչվեց ընտրված մասնակից:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու

դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.2 ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով:

Հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված մինչև հինգ, իսկ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած փաստաթղթերի գնահատումը՝ դրանք ներկայացվելու օրվանից հաշված մինչև տաս աշխատանքային օրվա ընթացքում:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «Մաստարա» Ա/Կ-ի «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում մասնակցության հայտը արձանագրել է, որ «Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացված գնային առաջարկ հավելված 4-ով մասնակցի անվանումը /ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանունը/ տողում լրացված են այլ կազմակերպության և այլ քաղաքացու անուն ազգանուն, որը հիմք էր հայտը մերժելու, մինչդեռ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը տրամադրել է «Մաստարա» Ա/Կ-ին մեկ աշխատանքային օր՝ անհամապատասխանությունը շտկելու համար, որը հակասում է ինչպես Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի, 41-րդ կետի, այլ նաև Հրավերի 7.2 կետին:

Ավելին, «Մաստարա» Ա/Կ-ի գնային առաջարկ հավելված 4-ի վրա /ներառյալ նաև բոլոր հավելվածները/ դրված է «Մաստարա» Ա/Կ-ի կողմից լիազորված անձ Շուշիկ Խաչատրյանի էլեկտրոնային ստորագրությունը, որի ստորագրության ծառայությունն ակտիվ չէ և հետևաբար թվային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերը չեն կարող համարվել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն այս եզրահանգման է եկել հիմք ընդունելով այն փաստական հանգամանքը, որ նույն օրը «Մաստարա» Ա/Կ-ն և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն մասնակցել են մեկ այլ գնման ընթացակարգի /կցվում է/, որի ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցում է կատարվել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ, որին ի պատասխան ստացվել է պատասխան, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կարիքների համար համար կազմակերպված «ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-18/010» ծածկագրով մրցույթին «Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացված բոլոր հավելվածները, լիազորագիրը և լիցենզիայի 4 ներդիրները պարունակում են Շուշիկ Խաչատրյանի անվավեր էլեկտրոնային ստորագրությունը:

Վերոնշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով 2004թ. դեկտեմբերի 14-ի էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը, մերժել է «Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտը:

Նման փաստական հանգամանքների պայմաններում գտնում ենք, որ «Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկ /հավելված 4-ը/ չի համապատասխանում «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հրավերով սահմանված պահանջներին և այս պարագայում «Մաստարա» Ա/Կ-ի հայտը ենթակա էր մերժման:

Ի լրումն «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից 09.10.2018թ. ներկայացրած ԳԲԽ-ԷՍ-2018/102 բողոքի, Ընկերությունը 22.10.2018թ. ներկայացրել է գրություն, որով հայտնել է հետևյալը.

«Ինչպես արդեն հայտնել էինք, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն հարցում էր ներկայացրել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին /կցելով «Մաստարա» Ա/Կ-ի հայտը՝ հաստատված Շուշիկ Խաչատրյանի էլեկտրոնային ստորագրությամբ/ և խնդրել տրամադրել տեղեկատվություն «Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտերին զետեղված էլեկտրոնային թվային ստորագրության վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցմանը՝ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով մրցույթին

«Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտերին զետեղված էլեկտրոնային ստորագրության վերաբերյալ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն 19.10.2018թ. պատասխանել է, որ գրությանը կից PDF ձևաչափով ներկայացված բոլոր փաստաթղթերը չեն համարվում պատշաճ ստորագրված էլեկտրոնային փաստաթղթեր:

Ինչ վերաբերում է ԳԲԽ-ԷՍ-2018/102 բողոքի վերաբերյալ Մեղրիի համայնքապետարանի 15.10.2018թ. գրությանը, ապա հայտնում ենք, որ Մեղրիի համայնքապետարանը «Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացրած հայտի գնային առաջարկում Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) տողում այլ կազմակերպության և տնօրենի անուն լրացված լինելու փաստի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում կատարելուն և վերոնշված հարցի վերաբերյալ պարզաբանում ստանալու հետ կապված՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք է ընդունել ՀՀ ֆինանսների նախարարության այն հիմնավորումը, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջների համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Միաժամանակ հայտնվում է, որ գրությամբ բարձրացված հարցը կարգավորվում է ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 32-րդ կետի 2-րդ ենթակետով և նույն կարգի 41-րդ կետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ, կարծես թե, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը սխալ է ընկալել և հիմնավորելով, թե գնային առաջարկում առկա անհամապատասխանությունը տեխնիկական վրիպակ է՝ որոշել է տրամադրել «Մաստարա» Ա/Կ-ին մեկ աշխատանքային օր անհամապատասխանությունը շտկելու համար, մինչդեռ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով և Կարգի 41-րդ կետով նման իրավական կարգավորում սահմանված չէ:

Նման փաստական հանգամանքների պայմաններում գտնում ենք, որ «Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացրած հայտը չի համապատասխանում «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հրավերով սահմանված պահանջներին և այս պարագայում «Մաստարա» Ա/Կ-ի հայտը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանին խնդրում ենք.

• Դադարեցնել «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 4

արձանագրության համաձայն՝ «Մաստարա» Ա/Կ-ին վերոհիշյալ ընթացակարգի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը,

• Դադարեցնել «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Մաստարա» Ա/Կ-ին վերոհիշյալ ընթացակարգի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչելու մասին որոշումը և պայմանագիր կնքելու մասին որոշումը:

• Պարտավորեցնել «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին մերժել «Մաստարա» Ա/Կ-ի հայտը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

2. <u>ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից 09.10.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 15.10.2018թ. թիվ Ե-1444 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Մեղրիի համայնքապետարանի կողմից կազմակերպված ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձանաժողովի անդամները հայտերի բացման նիստում գնահատել են, որ ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված նվազագույն պահանջներին, բացառությամբ «Մաստարա» Ա/Կ-ի, որի ներկայացրած հայտի գնային առաջարկում Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) տողում լրացված են այլ կազմակերպության և տնօրենի անուն, իսկ հրավերով նախատեսված լիցենզիաները ներկայացնելիս մասնակցի կողմից կցվել են այլ կազմակերպության լիցենզիաներ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հաշվի առնելով նաև, որ ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով ընթացակարգի գնման առարկա հանդիսացող աշխատանքների իրականացումը նախատեսված է պետության կողմից տրվելիք սուբվենցիաների ծրագրով, հանձնաժողովի նիստը կասեցնել և նշված անհամապատասխանությունները հայտի մերժման հիմք

համարելու վերաբերյալ պաշտոնական պարզաբանում ստանալու նպատակով դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.09.2018թ.-ին ստացված գրությամբ հայտվում է, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջների համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Միաժամանակ հայտնվում է, որ գրությամբ բարձրացված հարցը կարգավորվում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով և նույն կարգի 41-րդ կետով:

Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում են մասնակցի ներկայացրած գնային առաջարկում հնարավոր անհամապատասխանությունների դեպքերը, որոնց պարագայում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, և հաշվի առնելով, որ «Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկում առկա անհամապատասխանությունը կապված չէ գնման առարկայի կամ առաջարկված գնի հետ և բացառապես պայմանավորված է տեխնիկական վրիպմամբ, գնահատող հանձնաժողովը որոշեց հնարավորություն տալ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ շտկելու նշված անհամապատասխանությունները:

«Մաստարա» Ա/Կ-ի կողմից անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկելուց հետո գնահատող հանձնաժողովը որոշել է ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Մաստարա» Ա/Կ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ինչ վերաբերում է «Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի վրա դրված էլեկտրոնային ստորագրությանը, հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, իսկ «Մաստարա» Ա/Կ-ի կողմից համակարգի միջոցով ներկայացված փաստաթղթերը հաստատված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի մասին, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/102 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից 09.10.2018թ. ներկայացրած բողոքը և 22.10.2018թ. ներկայացրած Բողոքի լրացումը և կից փաստաթղթերը, «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 28.09.2018թ. նիստի թիվ 3, 01.10.2018թ. նիստի թիվ 4, 05.10.2018թ. նիստի թիվ 5 արձանագրությունները, ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի 15.10.2018թ. թիվ Ե-1444 գրությամբ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքապետարանը Ագարակ քաղաքի Չարենցի 27/15 հասցեում զբոսայգու կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Մաստարա» Ա/Կ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից) և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 28.09.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման՝ ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված նվազագույն պահանջներին, բացառությամբ «Մաստարա» Ա/Կ-ի, որի ներկայացրած հայտի գնային առաջարկում Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) տողում լրացված են այլ կազմակերպության և տնօրենի անուն, իսկ հրավերով նախատեսված լիցենզիաները ներկայացնելիս մասնակցի կողմից կցվել են այլ կազմակերպության լիցենզիաներ:

Նույն արձանագրության 4.2 կետով Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.09.2018թ. ստացված գրությունը, որոշեց կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և տեղեկացնել «Մաստարա» Ա/Կ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը 01.10.2018թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 4.1 կետով արձանագրել է, որ «Մաստարա» Ա/Կ-ի կողմից 01.10.2018թ. շտկվել են անհամապատասխանությունները:

Նույն կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Մաստարա» Ա/Կ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընդհանուր գնային առաջարկները կազմել են համապատասխանաբար 33.250.000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) և 33.900.000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Նույն արձանագրության 5.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Մաստարա» Ա/Կ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 05.10.2018թ. նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետով Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Մաստարա» Ա/Կ-ին:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստում Ընկերության ներկայացուցիչը պնդեց Բողոքն ամբողջությամբ՝ Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրելով այն փաստի վրա, որ Հանձնաժողովն՝ ուսումնասիրելով «Մաստարա» Ա/Կ-ի մասնակցության հայտը և արձանագրելով, որ Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանունը) տողում լրացված են այլ կազմակերպության և այլ քաղաքացու տվյալներ՝ այդուհանդերձ, «Մաստարա» Ա/Կ-ին տրամադրել է մեկ աշխատանքային օր՝ անհամապատասխանությունը շտկելու համար, մինչդեռ, Բողոքաբերի պնդմամբ, արձանագրված անհամապատասխանությունն արդեն իսկ հիմք էր հայտը մերժելու համար: Բողոքաբերի գնահատմամբ, Հանձնաժողովի նման որոշումն իրավաչափ չէ և կայացված է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի, 41-րդ կետի, ինչպես նաև Հրավերի 7.2 կետի խախտմամբ: Բացի այդ, ըստ Բողոքաբերի, «Մաստարա» Ա/Կ-ի գնային առաջարկը, ինչպես նաև հայտի մնացյալ բոլոր հավելվածները հաստատված են «Մաստարա» Ա/Կ-ի կողմից լիազորված անձ Շուշիկ Խաչատրյանի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի ստորագրության ծառայությունն ակտիվ չէ, հետևաբար, թվային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերը չեն կարող համարվել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված:

Որպես նշված փաստարկի հիմնավորում՝ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց համապատասխան ապացույց այն մասին, որ նույն օրը «Մաստարա» Ա/Կ-ն և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն մասնակցել են մեկ այլ գնման ընթացակարգի, որի շրջանակներում պատվիրատուի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի, կողմից «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին կատարված հարցմանն ի պատասխան տեղեկացվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կարիքների համար կազմակերպված «ՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-18/010» ծածկագրով ընթացակարգին «Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացված բոլոր հավելվածները, լիազորագիրը և լիցենզիայի չորս ներդիրները պարունակում են Շուշիկ Խաչատրյանի անվավեր էլեկտրոնային ստորագրությունը: Հիմք ընդունելով 2004թ. դեկտեմբերի 14-ի «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը, վերը նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտը:

Բողոքի քննության շրջանակներում Բողոքներ քննող անձն Ընկերության ներկայացուցչից պահանջեց ներկայացնել «Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացված հայտի հավելվածներին զետեղված էլեկտրոնային թվային ստորագրության պատշաճության վերաբերյալ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի կողմից տրամադրած եզրակացությունը:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց «Մաստարա» Ա/Կ-ի կողմից 10.10.2018թ. «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին կատարված հարցումը և վերջինիս կողմից 19.10.2018թ. տրամադրած եզրակացությունը, որի համաձայն՝ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով մրցույթին «Մաստարա» Ա/Կ-ի կողմից PDF ձևաչափով ներկայացված բոլոր փաստաթղթերը չեն համարվում պատշաճ ստորագրված էլեկտրոնային փաստաթղթեր:

Միաժամանակ, «Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկում առկա անհամապատասխանության և վերջինիս գնահատման վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով Պատվիրատուն հարցում է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն և վերջինիս կողմից 28.09.2018թ.-ին ստացված գրությամբ տեղեկացվել, որ մասնակիցների ներկայացրած հայտերի՝ հրավերի պահանջների համապատասխանության գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Լիազորված մարմինը հայտնել է նաև, որ գրությամբ բարձրացված հարցը կարգավորվում է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով և նույն կարգի 41-րդ կետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսունհետ՝ նաև Օրենք)

• 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ):

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի՝

- 13-րդ հոդվածի համաձայն՝ Էլեկտրոնային թվային ստորագրության և դրա ստուգման տվյալների պատկանելիությունը ստորագրող անձին հաստատվում է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրով, որը տրամադրում է հավաստագրման կենտրոնը:

- 14-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը կարող է ունենալ գործողության ժամկետ: Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի գործողության ժամկետը լրանալու պահից հետո տվյալ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված փաստաթղթերը չեն համարվում էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնային առաջարկ:

• 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

• 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքապետարանը Ագարակ քաղաքի Չարենցի 27/15 հասցեում զբոսայգու կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7.2 կետի համաձայն՝ Հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը,

հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Նույն հրավերի 7.19 կետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, իսկ այնուհետև՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Մաստարա» Ա/Կ-ն:

- «Մաստարա» Ա/Կ-ի գնային առաջարկում Մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) տողում լրացված են այլ կազմակերպության անվանումը և տնօրենի անուն ազգանունը:

- «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին կողմից 19.10.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով ընթացակարգին «Մաստարա» Ա/Կ-ի կողմից PDF ձևաչափով ներկայացված բոլոր փաստաթղթերը չեն համարվում պատշաճ ստորագրված էլեկտրոնային փաստաթղթեր:

Հաշվի առնելով, որ «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով ընթացակարգին «Մաստարա» Ա/Կ-ի կողմից PDF ձևաչափով ներկայացված բոլոր հավելվածները, այդ թվում նաև հավելված 4-ը (գնային առաջարկը) չեն հանդիսանում պատշաճ ստորագրված էլեկտրոնային փաստաթղթեր, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Մաստարա» Ա/Կ-ի հայտը բավարար գնահատելով, վերջինիս 1-ին տեղ զբաղեցնող, իսկ այնուհետև՝ ընտրված մասնակից ճանաչելով գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով է Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ

մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով, Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով, 40-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 7.19 կետով սահմանված պահանջները:

Միաժամանակ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուի կողմից 15.10.2018թ. թիվ Ե-1444 գրությամբ հայտնած դիրքորոշման մեջ վկայակոչված՝ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ մասնակցի ներկայացրած գնային առաջարկում հնարավոր անհամապատասխանությունների դեպքերը, որոնց պարագայում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, չեն նախատեսում «Մաստարա» Ա/Կ-ի գնային առաջարկում առկա անհամապատասխանության դեպքը, թեև գտնում է, որ «Մաստարա» Ա/Կ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկում առկա անհամապատասխանությունը տեխնիկական վրիպակի արդյունք է, ուստի և գնային առաջարկի հավելվածը Մասնակցի էլեկտրոնային ստորագրությամբ պատշաճ ստորագրված լինելու դեպքում՝ չէր կարող հանդիսանալ վերջինիս հայտը մերժելու հիմք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 09.10.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 01.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Մաստարա» Ա/Կ-ին վերոհիշյալ ընթացակարգի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում:

3. Պարտավորեցնել «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 05.10.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ «Մաստարա» Ա/Կ-ին վերոհիշյալ ընթացակարգի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում:

4. Պարտավորեցնել «ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «Մաստարա» Ա/Կ-ի հայտը մերժելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ